ԽԱՉԱՁԵՎ ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵՐԿՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԱՐՑԱԽ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Ս. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խաչաձև գմբեթավոր եկեղեցիները հայ ճարտարապետության առավել հետաքրքրական ու կարևոր հուշարձաններից են։ Այդ կարգի եկեղեցիների տարածված տեսակներից (քառախորան, եռախորան, միախորան) պահպանվել են նաև պատմական Հայաստանի Արցախ նահանգի տարածքում։ Վերջինս ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածը։ Իրենց կառուցվածքին հասած եկեղեցիների նման օրինակներ հիմնականում կառուցվել ու մասամբ պահպանվել են Հայաստանի Այրարատ նահանգի Արագածոտն և Շիրակ գավառներում։ Ստորև ներկայացվող երկու եկեղեցիներն էլ պատկանում են միախորան խաչաթև գմբեթավոր եկեղեցիների տեսակին, ինչպիսիք են, օրինակ, Շենիկի (VI դար), Կոշի (VII դարի առաջին կես), Արտաշավանի ու Կարմրավոր (VII դարի երկրորդ կես) եկեղեցիները և այլն։ Ի տարբերություն թվարկածների, ներկայացվող երկու հուշարձանների՝ Խունիսավանքի և Պողոսագոմեր գյուղի Ամենափրկիչ վանքի ուսումնասիրության ուղղությամբ մինչև հիմա որևէ աշխատանք չի կատարվել և այդ ոչ երկրորդական գործում սա առաջին փորձն է։ Խունիսավանքի և Ամենափրկիչ վանքի վերաբերյալ պատմագրական տեղեկությունները սակավ են։ Կան միայն անցյալ դարավերջին և մեր դարասկզբին հայ նշանավոր գիտնականներ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի[1] և Երվանդ Լալայանցի[2] կողմից տրված հպանցիկ տեղեկությունները հուշարձանների տեղադրության ու պահպանվածության վիճակի մասին։ Վերոհիշյալ աշխատություններում պարունակվող վավերանյութերը թեև աղքատիկ, բայց և կարևոր են որպես եղակի սկզբնաղբյուր։

Խունիսավանքը (նկ. 1₁,₃) գտնվում է պատմական Փառիսոսի թագավորության Գարդման գավառի տարածքում, Շամքոր գետի ձախ ափին, պղնձահանքով հարուստ Գետաբակ (Գետաբակս) բնակավայրից երկու կիլոմետր դեպի արևելք։ Եկեղեցին սեղադրված է Շամքոր գետի հովիտը թեքված մի լեռնաճյուղի ջրբաժան գծի վրա, շրջապատված անտառապատ լեռներով։ Գետաբակը, գտնվելով Հայաստանի կենտրոնական գավառներից Փառիսոսի լեռնանցքով Գանձակ տանող առևտրական գլխավոր ճանապարհներից մեկի վրա, X—XI դդ. բաղգավաճել ու բաղմամարդ է դարձել։ Այդ են վկայում այն բազմաթիվ հուշարձանները, որոնք կառուցվել են նշված տարածքում հենց այդ ժամանակաշրջանում՝ Փառիսոսի վանք՝ IX դար, Փառիսոս մայրաքաղաքի եկեղեցիներից մի քանիսը՝ X—XI դդ., Փառիսոսի հռչակավոր բերդը IX—X դդ. և այլն։ Թվարկված հուշարձանները ուսումնասիրելով ու համեմատելով՝ կարելի է եզրակացնել, որ Խունիսավանքը, որի կառուցողական արվեստը շատ նման է վերոհիշյալ եկեղեցիներին, կառուցվել է նույն ժամանակաշրջանում (X—XI դդ.), թեև առավել հնաոճ է։ Բարեբախտաբար եկեղեցին կանգուն է և մեզ է հասել իր վրա չկրելով հետագա դարերի վերանորոգման հետքեր։ Այն ամբողջապես կառուցված է կոպտատաշ քարերով և զուրկ է ամեն տեսակ զարդաքանդակներից։ Չեն պահպանվել նաև արձանագրություններ։ Եկեղեցին ունի մեկ մուտք՝ արևմուտքից, ութանիստ թմբուկ չորս նեղ լուսամուտներով, գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթարդին իրականացված է առագաստների միջոցով։ Ի դեպ, կառուցողական այդ լուծումը նմանատիպ հուշարձաններում սկսում է հանդիպել դեռևս VII դարի երկրորդ կեսից (Դաշտա-

---

[1] Մ. Բարխուտարյանց. Արցախ. Բաքու, 1895, էջ 190, 314։

[2] Ե. Լալայան. Գանձակի գավառ. Թիֆլիս, 1899, էջ 139։



Նկ. 1

ղեմի Քրիստափոր եկեղեցի և այլն)։ Եկեղեցին ներքուստ սվաղված է կրաշաղախով, որը գրեթե ամբողջությամբ պահպանվել է։ Խունիսավանքի շրջակայքում նկատվում են տնատեղերի ավերակներ, որոնց մեծ մասը այժմ ծածկված է խիտ անտառով։

Արցախի Խաչեն գավառում, Տրտու (այժմ՝ Թարթառ) գետի աջ ափին, հինավուրց Դրմբոն, Կճողուտ, Ղաղարահող և Պողոսագոմեր գյուղերի արանքում է տարածված մի հրաշագեղ տափարակ, որը հյուսիսային և արևմտյան կողմերից ավարտվում է գահավեժ ժայռերով՝ ստեղծելով բնական անմատչելիություն։ Տափարակի հյուսիսային ծայրին ցայսօր կանգուն է ներկայացվող հորինվածքն ունեցող մեկ այլ եկեղեցի, որ կոչվում է Ամենափրկիչ վանք (Նկ. $1_{2,4}$)։ Այն կառուցված է կոփածո և սրբատաշ քարերով հիմնարկված մի լերկացած միակտոր քարաժայռի վրա։ Եկեղեցու արտաքին բոլոր անկյունաքարերը իրականացված են սրբատաշ, իսկ բոլորաձև գմբեթը և մնացած մասերը՝ անտաշ կամ կոփածո քարերով։ Եկեղեցու ներսը ամբողջապես ծեփված է, որը,

ինչպես և Խունիսավանքում, այստեղ ևս մասամբ քայքայված է։ Ունի մեկ մուտք՝ արևմուտքից և մեկական ոչ մեծ լուսամուտներ (բացի հյուսիսային ճակատից)։ Բոլորաձև թմբուկը, որի վեղարը լրիվ քանդված է ու թափված, ունի չորս լուսամուտ, որոնցից արևելյանը, որը ամենից լավ պահպանվածն է, ավելի նեղ է և իրականացված է միակտոր քարից։ Ի տարբերություն Խունիսավանքի, Ամենափրկիչ վանքում պահպանվել են արձանագրություններ, իսկ շրջակայքում, եկեղեցուց արևելք, եղել է հնագույն գերեզմանոց, ուր կան մի քանի խաչքարեր և դրանց պատվանդանները։ Այդ խաչքարերը կարելի է թվագրել XII—XIII դդ., ելնելով դրանց զարդամոտիվներից ու ոճից։ Խաչքարերից մեկը (չափերը՝ 200×78) ստորին մասում ունի երեքտողանի արձանագրություն։ Հինգտողանոց մեկ այլ արձանագրության պատառիկ կա եկեղեցու ներսում ընկած ջարդված բեկորի վրա (չափերը՝ 32×18)։ Ինչ խոսք, վանքի ամենաարժեքավոր արձանագրությունը արևմտյան ճակատին, դռան ճակատակալ սրբատաշ կիսակլոր քարի վրա փորագրված ութտողանոց արձանագրությունն է[3]։ Վերջինս չի քայքայվել և ընթեռնելի է գրեթե ամբողջությամբ, միայն գրության վերջին տողի վերջնամասը փշրված է, որտեղ հավանաբար եղել է թվականը։ Այնուամենայնիվ, եկեղեցու կառուցման ժամանակաշրջանի վերաբերյալ ստույգ եզրակացություններ անելու համար կան բավարարիչ տվյալներ։ Ինչպես, օրինակ, արձանագրության երկրորդ և երրորդ տողերում հիշատակված Հասանի որդի Վախտանգի անունը, որը մահացել է 1214 թ.։ Եկեղեցու արևմտյան ճակատի հարավային կողմի պատի մեջ ագուցված է մի փոքր խաչքար, որը ևս անվրեպ XII—XIII դդ. գործ է և կերտվել է հենց եկեղեցու պատի մեջ տեղադրվելու նպատակով։ Այս բոլոր հանգամանքները ուսումնասիրելով՝ Ամենափրկիչ վանքի կառուցման ժամանակաշրջանը պետք է համարել XII դարի վերջերից մինչև 1214 թվականն ընկած ժամանակահատվածը, թեև եկեղեցու ճարտարապետությունն իր մեջ ունի ավելի հնառճ տարրեր։ Ինչևիցե, Ամենափրկիչն իր հորինվածքով ամենաուշ նմուշներից է, որ Հայաստանի ծայրամաս Արցախի համար թվում է բնական[4]։

Արցախ նահանգի տարածքում հայ ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ կան, որոնք դեռևս քիչ են ուսումնասիրված։ Ամենևին չի բացառվում, որ կարող են հայտնվել ներկայացվող տեսակի այլ նմուշներ, որոնց ուսումնասիրության շնորհիվ էլ ավելի կլայնանա պատկերացումը այն երկրամասի ճարտարապետության մասին, որը դարեր շարունակ տնտեսական և մանավանդ մշակութային սերտ կապերի մեջ է եղել Հայաստանի կենտրոնական գավառների ու քաղաքների հետ։

ДВЕ КРЕСТОВОКУПОЛЬНЫЕ ЦЕРКВИ В ОБЛАСТИ АРЦАХ

С. Г. КАРАПЕТЯН

(Резюме)

Крестовокупольные церкви были распространены в центральной Армении, в районах Арагацотн и Ширак Айраратской области. Церкви этого типа встречаются (правда, редко) также в Арцахе, восточной области исторической Армении. В арцахских районах Гардман и Хачен сохранились памятники, относящиеся к одноапсидному варианту крестовокупольного типа,—Хунисаванк и церковь Аменапркич. Анализ архитектурных форм и надписей показывает, что эти церкви были построены в X—XIII вв., хотя однотипные сооружения в центральных районах исторической Армении возводились еще в VI в. Представляется необходимым дальнейшее изучение обеих церквей, тем более что арцахская архитектура до сих пор недостаточно изучена.

3 Ս. Բարխուդարյան. Դիվան հայ վիմագրության. պրակ 5, Երևան, 1982, էջ 91—92։

4 Հուշարձանների չափագրությունները կատարել են Վ. Ջարյանը, Ա. Քերոբյանը, Ս. Կարապետյանը։